ՀԱՆԳԻՍՏ Տ. ՏԱԹԵՎ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
(1931—1983 թթ.)

1983 թվականի մայիսի 25-ին Թբիլիսիում հանկարծամահ եղավ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Տաթև քահանա Հարությունյանը:

Նա ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում 1931 թվականի մայիսի 1-ին: Նախնական կրթությունն ստացել է տեղի Պողոս-Պետրոս հայկական վարժարանում՝ միաժամանակ ծառայելով Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում իբրև ձայնավոր:

1947 թվականին ընտանիքով ներգաղթել է Հայաստան և հաստատվել Երևան քաղաքում: Սովորել է Երևանի երաժշտական ուսումնարանում: 1953 թվականին զորակոչվել է սովետական բանակ: Զինվորական ծառայության ժամկետը վերջացնելուց հետո ընտանիքով տեղափոխվել է Սոչիի քաղաք, ուր միաժամանակ աշխատել է կահույքի գործարանում: Ամուսնացել է 1960 թվականին և ունեցել երկու զավակ:

1970 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան՝ հետևելու քահանայական դասընթացներին և կատարելագործելու իր կրոնական գիտելիքները: 1971 թ. Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի:

Տ. Տաթև քահանան եղել է հավատքով լեցուն, եռանդուն, եկեղեցասեր հոգևորական և իր ընտանիքին նվիրված հայր:

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Վրաստանի հայոց թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի միջնորդությանը, Տ. Տաթև քահանա Հարությունյանին 1976 թվականին № 844 կոնդակով պարգևատրել է քահանայական լանջախաչով:

Արժանապատիվ Տ. Տաթև քահանա Հարությունյանը, հավատարիմ մնալով իր ուխտին, մինչև մահ ծառայել է Ս. Գևորգ եկեղեցում՝ նվիրված իր հոտին, իր հայրենիքին և Աստծուն:

Մայիսի 28-ին, շաբաթ օրը, Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում պատարագ մատուցեց թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը: Պատարագի կեսին,



«Ողջույն»-ից առաջ, առաջնորդ սրբազան հայրը խոսեց դամբանական, որից հետո կատարեց հանգուցյալի վերջին օծումը՝ սրբալույս մյուռոնով դրոշմելով նրա ճակատն ու աչքը:

Ս. պատարագին ներկա էին Թբիլիսիի հայոց քահանայից դասը, հանգուցյալի ընտանիքը, զավակները, ազգականները և բազում հավատացյալներ: Ս. պատարագին ներկա էր նաև Վրացական ՍՍՀ կրոնից նախարարն իր գործակիցներով:

Մայիսի 29-ին Ս. Գևորգ եկեղեցում հանգուցյալի հոգեհանգիստը կատարվելուց հետո, նրա մարմինը տեղափոխվեց Սոչիի քաղաք՝ իր ծնողների գերեզմանների կողքին թաղվելու համար:

Թող Աստված հոգին լուսավորի հանգուցյալ Տ. Տաթև քահանայի: